# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 4-ը Արաբական Միացյալ Էմիրություններ (ք. Դուբայ) գործուղման վերաբերյալ

**Գործուղվող անձ**

Նախարարի օգնական Անի Կիրակոսյան

**Երկիր/քաղաք/ժամկետ**

2023 թվականի նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 4-ը Արաբական Միացյալ Էմիրություններ (ք.Դուբայ)

**Հրավիրող կողմ**

«Կլիմայի փոփոխության մասին» ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի քարտուղարություն

**Նպատակը**

Մասնակցություն ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի կողմերի 28-րդ համաժողովին (COP28), հարակից հանդիպումներին

**Մասնակցություն հանդիպումների**

Նախարարին ուղեկցելու շրջանակում մասնակցել եմ հետևյալ հանդիպումներին՝

- Հանդիպում Կանաչ կլիմայի հիմնադրամի (ԿԿՀ) երկրների համագործակցության հարցերով տնօրեն Կարոլինա Ֆուենտեսի և փոխտնօրեն Նոնիլանիլա Զինդելայի հետ,
- Հանդիպում «Անապատացման դեմ պայքարի» կոնվենցիայի (UNCCD) COP15 նախագահ Ալիան Ռիչարդ Դոնվահիի ղեկավարած պատվիրակության հետ,
- Հանդիպում ԱՍԳ Գործընկերության աջակցման գրասենյակի գլոբալ տնօրեն Պաբլո Վիեյրայի և Երկրների ներգրավվածության հարցերով տնօրեն Մարիանա Պանունսիո-Ֆելդմանի հետ,
- Հանդիպում Հարմարվողականության հիմնադրամի ղեկավար Միկո Օլիկայնենի հետ:

Առանձին մասնակցել եմ՝

- «Առողջապահության ինտեգրում կորուստների և վնասների ֆինանսավորման մեջ» միջոցառմանը,

- «Ուղիղ հասանելիության ընդլայնում «Մասնակիցը մասնակցին» համագործակցության միջոցով. կլիմայի ֆինանսավորման հասանելիության և իրացման տիպիկ խնդիրների հասցեագրում» միջոցառմանը:

Ապահովել եմ բոլոր հանդիպումների լուսաբանումը նախարարության պաշտոնական էջերով: Տեղում կազմակերպել եմ նախարարի հարցազրույցները տեղական և հայաստանյան լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ:

Շրջակա միջավայրի նախարարության հասարակայնության հետ կապերի
բաժնի պետ-նախարարի մամուլի քարտուղար
Անի Հակոբյան
07.12.2023թ.